

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Խ.ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԱՅՎԱԶՅԱՆ ՍՈՆԱ ՈՒՖԱՅԵԼԻ**

**ԱՆԳԼԵՐԵՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇՆՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՈՐՈՇՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ**

ԺԳ. 00.02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»  
(անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր**

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

**Գիտական ղեկավար՝**

Մանկավարժական գիտությունների դոկտոր՝ **Ի.Կ. Կարապետյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

Մանկավարժական գիտությունների դոկտոր՝ **Բ.Ս. Եսաջանյան**

Մանկավարժական գիտությունների թեկնածու՝ **Ն.Ս. Հայրապետյան**

**Առաջատար կազմակերպություն՝**

Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. հունվարի 29-ին ժամը 12<sup>00</sup>-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010 Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. դեկտեմբերի 29 - ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝



**Ա. Հ. ՍԱԿԵԼՅԱՆ**

## ԱՅԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Անզլերեն հոգեբանական ենթալեզվի ուսուցումը հիմնականում միտված է ընկալողական հմտությունների ձեռքբերմանը: Հոգեբանական անզլերեն բառապաշարը, քերականությունը, հնչյունաբանությունն ուսուցանվում են ուսումնական բնագրերի, լեզվական բնույթի վարժությունների միջոցով: Խոսքային-ստեղծագործական բնույթի վարժությունները և առաջադրանքները կիրառվում են միայն ուժեղ խմբերի հետ աշխատելիս: Ուսուցման ժամանակակից անձնակողմնորոշիչ, հեռահաղորդակցական տեխնոլոգիաների, փոխներգործուն մեթոդների ու հնարների կիրառումը չի կրում համակարգված բնույթ:

Կարելի է պնդել, որ ՀՀ-ում անզլերեն հոգեբանական ենթալեզվի ուսուցմանը, համապատասխան դասընթացի նախագծմանը նվիրված հետազոտություններ դեռևս չեն իրականացվել: Անզլերեն հոգեբանական ենթալեզուն հիմնականում չի ուսումնասիրվում ՀՀ-ում ստեղծված դասագրքերով: Արտերկրում ստեղծված դասագրքերի հեղինակները չէին կարող հաշվի առնել հայերենի և անզլերենի հոգեբանական ենթալեզուների տիպաբանական առանձնահատկությունները:

Դրա հետ մեկտեղ, կարելի է նշել, որ վերջին տարիներին հրապարակ են իջել օտարալեզու մասնագիտական և մասնագիտական կողմնորոշման բնագրերի ընտրությանը, ուսուցմանը, խոսութային կոմպետենցիայի ձևավորմանը նվիրված հետազոտություններ: Մասնավորապես, սույն հետազոտության խնդիրների լուծման տեսանկյունից կարևորվում են ակտիվ և պասիվ բառապաշարի ընտրության և ուսուցման սկզբունքների /Մ. Գ. Աստվածատրյան 1985/, անզլերեն պատմագիտական տերմինաբանության թեմատիկ խմբերի ընտրությանը և մեթոդական տիպականացմանը /Մ. Պ. Ասատրյան 2006/, անզլերենի բանասիրական կողմնորոշման դասընթացում հնչյունական, քերականական, բառային փոխներթափանցման հաղթահարմանը /Գ. Լ. Դանիելյան 2008/, ֆրանսերենի մասնագիտական դասընթացում /Մ. Ս. Բալայան 2012/, ինչպես նաև անզլերենի մասնագիտական դասընթացում խոսութային կոմպետենցիայի զարգացմանը /Ա. Գ. Մանուկյան 2009/, նորագույն համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ անզլերենի ճարտարապետաշինարարական տերմինաբանության ընտրության սկզբունքների ու ուսուցման ռազմավարությունների մշակմանը /Ն. Վ. Պողոսյան 2010/, խորացված անզլերենի ուսուցման դպրոցական դասընթացում լեզվանյութի ընտրությանը և ուսուցմանը /Ն. Ս. Հայրապետյան 2009/, նախադպրոցական ֆակուլտետի բուհական դասընթացում հետադարձ կապի մոդելի ստեղծմանը /Ա. Մ. Մանուկյան 2008/, համակարգչային տեխնոլոգիաների միջոցով գերմաներեն տնտեսագիտական տերմինաբանության թեզաուրուսների կազմմանը /Հ.Ա. Ճանճապանյան 2001/, անզլերեն մասնագիտական կողմնորոշման ուսումնական բնագրերի հիման վրա բառապաշարի և քերականական նյութի ընտրությանը և կազմակերպմանը

/Ռ.Ս. Պետրոսյան 2006/, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմանը /Մ. Գ. Աստվածատրյան, Գ. Հ. Թերզյան և այլոք 2004/ նվիրված աշխատանքները:

Կարևորվում են ինչպես մեթոդաբանության, այնպես էլ օտար լեզուների ուսուցման մեթոդիկայի, դասագրքաստեղծման տեսանկյունից մասնագիտական կողմնորոշման դասընթացների տարբեր դասագրքերի և ուսումնական ձեռնարկների ուսումնասիրությունը և վերլուծությունը / Ղ. Ա. Семашко 2006, Ի.Ս. Агабебян, П.И.Коваленко, Ю.А. Кудряшова 2008, Գ. В. Бочарова 2004, Н.В.Куликова, Л.А.Мельник, Е.Б.Зенкевич 2007/:

Հայրենական մեթոդական միտքը նույնպես անդրադարձել է միջմշակութային կոմպետենցիայի զարգացման հիմնախնդրի /Բ. Ս. Եսաջանյան 2001, Մ. Օ. Գյոդակյանի, Ի. Կ. Կարապետյան 2005, և այլոք/:

Աշանձնակի նշանակություն ունեն կրեոլ բնագրերի /Ս. Գ. Алексеев 2002/, գերբնագրերի /Ղ. Ю. Беленова 2008, Ի. В. Куликова 2007/, հարատեքստի / Ղ. Գ. Викулова 2001/, նախադեպային տեքստերի /Յ.Գ. Костомаров, Н.Д. Бурвикова 1994/ միջոցով, գերտեքստային տեխնոլոգիաներով անգլերենի ուսուցման /Ղ. Ю.Беленова 2008/, կոմպետենտային /Մ. Н. Вятютнев 1975/ մոտեցումները:

Ինչպես հայտնի է, ապագա հոգեբաններն իրենց ուսումնառության տարիներին ուսումնասիրում են ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն լեզվով շրջանառվող հոգեբանամանկավարժական գրականություն: Նրանք հիմնականում թարգմանում են մեծ քանակությամբ հոդվածներ, անգամ գրքեր ռուսերեն և անգլերեն լեզուներով: Խնդիրն այն է, որ շատ ուսանողներ դժվարությամբ են ընթերցում մասնագիտական գրականություն ոչ միայն անգլերեն, այլև ռուսերեն լեզուներով, չնայած երբեմն դասախոսներն ուսանողներին արտալսարանային կամ ինքնուրույն աշխատանքի շրջանակներում առաջարկում են ուսումնասիրել օտարալեզու աղբյուրներ:

Ուսանողները դժգոհում են, որ նրանք դժվարությամբ են թարգմանում անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն շատ եզրաբառեր, տարբեր բնույթի դարձվածքներ, երբ որ ընթերցում են անգլերեն հոգեբանական բնագրեր:

Խնդիրն ավելի է սրվում, երբ հոգեբանները փորձում են ընթերցել կամ թարգմանել հոգեբանական բնույթի գրականություն անգլերեն լեզվով: Շատ դեպքերում, թարգմանական դժվարությունները հանգեցում են նրան, որ թե՛ դասախոսները, թե՛ ուսանողներն ուղղակիորեն հրաժարվում են ուսումնասիրել անգլալեզու հոգեբանական գրականություն:

Հոգեբանական բնագրերի և բառապաշարի ուսումնասիրությունը օտար լեզուներով դառնում է կարևորագույն խնդիր, քանի որ հնարավոր չէ միայն հայալեզու կամ ռուսակեզու գրականության ուսումնասիրությամբ կրթել ժամանակակից պահանջներին համապատասխան մասնագետներ: Գաղտնիք չէ, որ հայ հոգեբանները ծանոթ լինելով հոգեբանության, հոգեվերլուծության ժամանակակից զարգացումներին, լուրջ լեզվամշակութային, մասնագիտական

դժվարություններ են հաղթահարում նոր հոգեբանական բնագավառներում մասնագիտանալիս:

Հատկանշական է այն, որ անգլերեն հոգեբանական ենթալեզվի ուսուցմանը կարող են և՛ նպաստել, և՛ խոչընդոտել միջնորդավորված /հիմնականում ռուսերենից/ թարգմանությունները, քանի որ դրանք շատ դեպքերում մակերեսային են և տերմինաբանական առումով իրականացված են ոչ պատշաճ մակարդակով:

Անգլերեն հոգեբանական բառապաշարի ուսուցման հիմնախնդիրն արդիական է նաև այն պատճառով, որ հետխորհրդային շրջանում հայալեզու հոգեբաններն ավելի մեծ հնարավորություններ ունեն արտերկրի մասնագետների հետ շփվելու համար: Նրանք մասնակցում են միջազգային գիտաժողովների, համատեղ դրամաշնորհային ծրագրերի և այլն: Ակնհայտ է, որ անգլերենի հոգեբանական ենթալեզվի ուսուցումը պետք է լինի շարունակական և բուհում սովորելու տարիները հիմք են դնում ցկյանս ուսումնառության: Այսպիսով, մասնագիտական գործունեություն ծավալելու բոլոր փուլերում հայալեզու հոգեբանները պետք է շարունակաբար զարգացնեն օտարալեզու խոսքային գործունեություն իրականացնելու հմտությունները համագիտական, մասնագիտական, առօրյա-խոսակցական մակարդակներում: Այդ համատեքստում անգլերեն լեզվով մասնագիտական բառապաշարի հավուր պատշաճի իմացությունը հույժ կարևոր խնդիր է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆՆԴԻՐԸ

Անգլերեն հոգեբանական բառապաշարի ուսուցումը բուհում սկիզբ է դնում մասնագիտական կողմնորոշման անգլերենի ցկյանս ուսուցման: Անհրաժեշտություն է առաջանում ստեղծել այնպիսի մանկավարժական, հոգեբանական պայմաններ, ինչպես նաև օտարալեզու բառապաշարի ուսուցման այնպիսի մեթոդական համակարգ, որոնք հնարավորություն կընձեռեն նշված հիմնախնդիրը լուծելու համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է՝

ստեղծել մասնագիտական կողմնորոշման անգլերեն բառապաշարի ուսուցման արդյունավետ կադապար և մշակել մասնագիտական մակարդակում ապագա հոգեբանների հաղորդակցական կոմպետենցիան զարգացնող մեթոդական համակարգ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԸ

մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցումն է բուհական համակարգում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

հոգեբանական կողմնորոշման անգլերեն բառապաշարի ուսուցման գործընթացն է մանկավարժական ուղղվածության բուհում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎՈՐԿԱԾԸ

Եթե հոգեբանական բառապաշարի ուսուցումը իրականացվի, հաշվի առնելով լեզվադիդակտիկայի զարգացման արդի միտումները, մասնագիտական և առօրյա-խոսակցական մակարդակներում միջնակութային, միջանձնային, ինչպես նաև հոգեբանամանկավարժական հաղորդակցության առանձնահատկությունները, մասնագիտական

կողմնորոշման անգլերենի ուսուցման ոլորտում ՀՀ-ի կրթական ժամանակակից իրողությունները, նրան առաջադրվող արդի պահանջները, հայալեզու ուսանողների ներքին և իրական, ինտեգրատիվ և ինստրումենտալ դրդապատճառները, լեզվամշակութային պահանջմունքները, օտարալեզու բառապաշարի ուսուցման տեխնոլոգիաները և ռազմավարությունները, ապա հնարավոր կլինի ստեղծել հոգեբանական անգլերեն բառապաշարի ուսուցման արդյունավետ կադապար և մշակել նրա ուսուցման և ուսումնառության համապատասխան մեթոդական համակարգ:

#### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՂԻՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

- Ուսումնասիրել օտարալեզու մասնագիտական կողմնորոշման, մասնավորապես հոգեբանական բառապաշարի, եզրույթների և կարգերի, հասկացությունների և հասկացությունների ուսուցմանը վերաբերող գրականություն ըստ հետազոտության առաջադիր խնդիրների և ակնկալվող բովանդակության:
- Համակարգել օտարալեզու մասնագիտական կողմնորոշման բառապաշարի ընտրության սկզբունքները, ուսուցման ռազմավարությունները, հստակեցնել հոգեբանական եզրույթների, տերմինակապակցությունների, մասնագիտական հասկացությունների թարգմանության ընթացակարգերը:
- Մշակել օտարալեզու ապագա հոգեբանների մասնագիտական, բառային և հաղորդակցական կոմպետենցիան ըստ կոնկրետ դասընթացի նպատակների շարունակական զարգացնող մեթոդական համակարգ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ հիմքում ընկած են կոմպետենտային (Մ.Գ. Աստվածատրյան, Ղ. Ի. Невирко, Մ. Canale, D. Hymes, K. Keen), հաղորդակցական-ձանաչողական (Ա. Յ. Матиенко, S. J. Savignon), նշանաբանական (Ի.Մ. Лотман), իմաստային դաշտերի (Ղ. Մ. Васильев), լեզվամշակութային (Գ. Ս. Потьлико, Գ. Գ. Слышкин), բառային, քերականական, հնչյունական, /միջ/մշակութային, խոսութային փոխներթափանցման (Ղ. Ի. Богатикова, Բ. Մ. Եսաջանյան, Ի. Կ. Կարապետյան, Ն. Ս. Меленцева), միջմշակութային հաղորդակցության ընթացքում մշակութային բնույթի սխալների հաղթահարման (Ս.Գ. Терминасова, Ի.Ս. Трегубова), անհամարժեք, ազգամշակութային նշույթավորում ունեցող բառապաշարի (Ե.Ա.Кривцова, Ե.Ն.Соловцова) ուսուցման մեթոդաբանական մոտեցումները և հայեցակարգերը:

#### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ.

1. Անգլերեն հոգեբանական հասկացությունների, մասնագիտական, առօրյա-խոսակցական բառապաշարի ընտրության և ուսուցման սկզբունքների դասակարգում և համակարգում:
2. Հայերենի և անգլերենի հոգեբանական ենթալեզուների լեզվաբանական և մեթոդական տիպականացման սկզբունքների ընտրություն, տիպական սխալների և դժվարությունների վերլուծություն:

3. Անկետային հարցում, ուսանողների հաղորդակցական-ճանաչողական պահանջմունքների, ինտեգրատիվ և ինստրումենտալ դրդապատճառների վերլուծություն:

4. Նախնական վարկածի հավաստիության, մշակված մեթոդական համակարգի արդյունավետության փորձարարական ստուգում և վերլուծություն: Ստացված արդյունքների ամփոփում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅՅԱԼ այն է, որ մշակվել է հոգեբանական կողմնորոշման օտարալեզու բառային և հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորման և զարգացման մեթոդական համակարգ, որի հիմքում ընկած են հաղորդակցական-ճանաչողական, գործաբանական մոտեցումների, միջլեզվային, միջմշակութային, խոսութային փոխներթափանցման, տիպական դժվարությունների հաղթահարման սկզբունքները և ռազմավարությունները:

Մշակվել է անգլերեն հոգեբանական բնագրերի շուրջ աշխատանքի, մասնագիտական, անհամարժեք բառապաշարի ընտրության և ուսուցման մեթոդական համակարգ, որը համադրում է ուսուցման ավանդական և ժամանակակից տեխնոլոգիաներ, մեթոդներ և ռազմավարություններ: Մշակված մեթոդական համակարգի արդյունավետությունը հիմնավորվել է համապատասխան փորձարարական ուսուցմամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

- ուսումնասիրվել և համակարգվել են անգլերեն հոգեբանական կողմնորոշման մասնագիտական, անհամարժեք, առօրյա-խոսակցական բառապաշարի ուսուցման ճանաչողական-գործաբանական, հաղորդակցական տեսությունները, ուսուցման անձնակողմնորոշիչ և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները:
- հստակեցվել է հոգեբանական կողմնորոշման անգլերեն բառապաշարի և դարձվածապաշարի ընտրության և ուսուցման նպատակն ու խնդիրները, բացահայտվել են հաղորդակցման մակարդակում մասնագիտական բառապաշարի ոճական առանձնահատկությունները, հաշվի առնելով համագիտական, նեղ մասնագիտական, ընդհանուր-խոսակցական հոգեբանական բառապաշարի գործառնության ոլորտները:
- ստեղծվել է հոգեբանական կողմնորոշման անգլերենի ուսուցման դասընթացում օտարալեզու բառային և հաղորդակցական կոմպետենցիան շարունակական զարգացնող մեթոդական համակարգ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. մշակվել է հոգեբանական կողմնորոշման անգլերենի ուսուցման վարժությունների համակարգ, հոգեբանական մասնագիտական, հանրամատչելի բնագրերի և բնագրային գեղարվեստական, վավերագրական ֆիլմերի սկրիպտների վերլուծության, տարբեր բառային միավորների ուսուցման և յուրացման, ուսանողների ընկալողական և արտադրողական լեզվական հմտությունների գնահատման չափանիշներ, որոնք կարող են նպաստել մասնագիտական

կողմնորոշման անզլերենի գործնական ուսուցմանը, շրջանառվող դասագրքերի արդյունավետ կիրառմանը, նոր ուսումնամեթոդական կոմպլեկտների, մշակումների ստեղծմանը, նոր դասընթացների նախագծմանը և կամզակերպմանը:

Հետազոտության հիմնական փուլերը.

Առաջին փուլ (2007-2008): Ընտրվել և ուսումնասիրվել է համապատասխան գիտամանկավարժական, բուն հոգեբանական, լեզվաբանական, մեթոդական գրականություն: Առանձնացվել են հետազոտության մեթոդաբանական հիմքը ներկայացնող աշխատությունները: Հստակեցվել է հետազոտության հասկացական-կարգային ապարատը, բովանդակությունը, նախագծվել և պլանավորվել են հետազոտության անցկացման փուլերը:

Երկրորդ փուլ (2009-2010): Հետազոտության վարկածը հաստատելու կամ ժխտելու նպատակով իրականացվել է անզլերեն հոգեբանական ենթալեզվի փորձարարական ուսուցում: Որոշվել է հետազոտության տեղը, համակազմի քանակը, ընտրվել են փորձարարական ուսուցման համար անհրաժեշտ ուսուցողական նյութերը, դասագրքերը, մեթոդական գործիքները:

Երրորդ փուլ (2010-2011): Իրականացվել է փորձարարական ուսուցում, որի ընթացքում բացահայտվել են հոգեբանական կողմնորոշման անզլերենի ուսուցման առանձնահատկությունները, հիմնավորվել է կիրառվող մեթոդական գործիքակազմի արդյունավետությունը: Ամփոփվել են հետազոտության արդյունքները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱԿԱՍՏԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿՈՐԿԱԾՈՒԹՅՈՒՆՆ ապահովվում է կիրառված մեթոդաբանական և մեթոդական գործիքակազմով, առաջադրվող դրույթների գործնական կիրառելիությամբ, հոգեբանական կողմնորոշման բառապաշարի ուսուցման ռազմավարություններով, հետազոտության խնդիրների և եզրակացությունների համապատասխանությամբ, ստացված վերջնարդյունքների հուսալիությամբ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ.

Հետազոտության արդյունքները քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնում, ինչպես նաև Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի նախադպրոցական մանկավարժություն և հոգեբանություն բաժնում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ

Հետազոտության արդյունքները ներդրվել են Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետում:

ՊԼՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՅՆԵՐԸ

1. Ապագա հոգեբանների օտարալեզու խոսքային կարողությունների զարգացման տեսանկյունից կարևորվում են միջմշակութային հաղորդակցության կենցաղային, գիտական, մասնագիտական ոլորտները: Մի կողմից, հոգեբանները պետք է յուրացնեն մեծ քանակությամբ հոգեբանական

գիտաբառեր, որոնք ընդունված են միջազգային հոգեբանական հանրության կողմից: Մյուս կողմից՝ հոգեբանության, հոգեվերլուծության ոլորտներում ընդունված ցանկացած փակ թեմա դիտարկվում է գիտական-մասնագիտական և առօրյա-խոսակցական մակարդակներում:

2. Ապագա հոգեբանները պետք է կարողանան ոչ միայն գրուցել իրենց հաճախորդների հետ, անցկացնել տարբեր բնույթի թերապիաներ, այլ և ելույթ ունենալ օտար լեզուներով: Դա ենթադրում է հետևյալ պահանջների կատարում. անգլերեն լեզվով իրար դիմել, անվանել թեման, շարադրել փաստարկները, գաղափարները, նկարագրել, ապացուցել ինչ-որ բան, հերքել, կոչ անել և վերջում եզրահանգել:

3. Հոգեբանական խոսույթների, գերտեքստերի, վիրտուալ խոսույթների, նախադեպային, երկխոսական բնագրերի միջոցով բառապաշարի ուսուցումը ենթադրում է հոգեբանական իմաստային դաշտի ուսումնասիրություն և նրա հիմնական հասկացույթների և հասկացությունների յուրացում:

4. Ուսուցման անձնակողմնորոշիչ նորագույն տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է ստեղծում ծանոթանալ տարբեր հոգեբանական բնագրերին, յուրացնել մասնագիտական կողմնորոշման բառապաշար, յուրացնել լեզվակիր հոգեբանների մասնագիտական, խոսքային վարքագիծը և մշակույթը:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են չորս հոդվածում (տես ատենախոսության սեղմագրի վերջում ներկայացված դրանց անվանացանկը):

#### ՀԵՏԱԶՆՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ.

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու զլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, գծապատկերից, աղյուսակից, բնագրերից և հավելվածներից: Աշխատանքի ծավալը 133 համակարգչային էջ է:

Աշխատանքի ներածական մասում հիմնավորել ենք հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, հետազոտության վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության հիմնադրույթները:

### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Հետազոտության «Անգլերենի հոգեբանական բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները մանկավարժական բուհում» առաջին զլուխը բաղկացած է երեք ենթազլխից:

Առաջին «Ապագա հոգեբանների միջմշակույթային հաղորդակցության ուսուցման առանձնահատկությունները մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում» ենթազլխում վերլուծվում է «լեզվական

իրագեցություն», «միջմշակութային հաղորդակցություն» հասկացությունները, դրանց ծագումնաբանությունը, ներկայացվում է հաղորդակցական իրագեցության բովանդակությունը, բաղադրամասերը:

Սահմանվում են «շփման պահանջմունք», «հաղորդակցություն», «շփում», «մշակույթ», հասկացությունները: Բացահայտվում են մայրենի և օտար լեզու ուսումնասիրելու և յուրացման պայմաններն ու գործոնները: Կարևորվում են մշակութային գործաբանական բնույթի սխալների բացահայտման և հաղթահարման հիմնախնդիրը:

Խոսույթը նշված համատեքստում հանդես է գալիս որպես ոչ միայն օտար լեզվի հիմնական միավոր, այլև միջմշակութային իրագեցության զարգացման կարևորագույն միջոց: Ներկայացվում են խոսույթի ձևավորման հիմնական պայմանները:

Խոսույթի միջոցով հոգեբանական ենթալեզվի ուսուցման տեսանկյունից առանձնանում են «կենցաղային» և «մասնագիտական ոլորտները»: Նշվում է, որ միջմշակութային հաղորդակցության ուսուցումը առաջ է բերում բազում հոգեբանական բնույթի խնդիրներ: Օրինակ «փակ և բաց թեմաների» հիմնախնդիրը, երբ փորձում են համեմատել մարդու ներաշխարհին, ինտիմ ոլորտներին վերաբերող բառապաշարը ներկայացնել անզլերենի և հայերենի մեթոդական տիպաբանության տեսանկյունից:

Մի կողմից, հոգեբանները գործ ունեն մեծ քանակությամբ հոգեբանական տերմինների հետ, որոնք ընդունված են միջազգային հոգեբանական հանրության կողմից: Մյուս կողմից՝ ցանկացած փակ թեմա դիտարկվում է գիտական-մասնագիտական և առօրյա-խոսակցական մակարդակներում: Հոգեբանական բառապաշարի ուսուցումը դժվարանում է հիմնականում առօրյան-խոսակցական մակարդակում:

Կարևորվում են հատկապես տաբու բառերի, հայոյանքների, անեծքների, ոչ նորմատիվ բառերի, հասարակաբանությունների ուսուցման հիմնախնդիրը, քանի որ կոպտաբանությունները, անվայելուչ, ոչ բարեհունչ լեզուն ուսումնասիրելով, հոգեբանները կարողանում են շոշափել բազում «փակ թեմաներ»:

Նշվում է, որ օտար լեզվի ցանկացած դաս, լինելով յուրահատուկ միջմշակութային հաղորդակցության ձև և միջոց, պետք է ունենա նախ և առաջ մասնագիտական ուղղվածություն, քանի որ մասնագիտական պահանջմունքներն առաջնային են մասնագիտական կողմնորոշման դասընթացում:

Տվյալ դասընթացը նախագծելիս, խնդիր է դրվում որոշակի սահմաններում ծանոթացնել ուսանողներին «փակ», արգելված, անվայելուչ բառապաշարին: Ժամանակի տրությունը և ուսուցման պայմանները թույլ չեն տալիս մշակել հատուկ դասընթաց, կամ համապատասխան ժամեր հատկացնել ոչ նորմատիվ հոգեբանական ուղղվածության բառապաշարի ուսուցման համար: Արդյունավետ է շեշտը դնել ուսանողների ինքնուրույն աշխատանքի վրա,

հանձնարարել, որ նրանք պատրաստեն զեկույցներ, հաղորդումներ, անեն ներկայացումներ ըստ հստակ մշակված թեմաների:

Նախագծելով միջմշակութային հաղորդակցության ուսուցման դասընթացը, անհրաժեշտ է ստեղծել այնպիսի իրադրություններ, երբ ուսանողների մոտ առաջանում է տվյալ մշակութային ծանոթանալու հատուկ հոգեվիճակ: Մի կողմից դա հեշտ է, քանի որ ցանկացած մշակութային երևույթ, հատկապես, եթե այն անծանոթ կամ անսովոր է, առաջացնում է համապատասխան հոգեվիճակ: Մյուս կողմից այդ հոգեվիճակը ոչ միշտ է դրական զգայական դաշտ ստեղծում տվյալ երևույթը հասկանալու, հանդուրժելու, երկխոսությունը յուրացնելու տեսանկյունից:

Երկրորդ ենթազխում **«Անգլերենի հոգեբանական կողմնորոշման բառապաշարի ընտրության սկզբունքները»** ներկայացվում և հիմնավորվում են անգլերենի հոգեբանական կողմնորոշման բառապաշարի ընտրության սկզբունքները:

Վերլուծվում են հայերեն և անգլերեն որոշ հենքային միավորներ: Նշվում է, որ համարժեք բառերը ներկայացնող հոգեբանական հասկացությունները միշտ են համընկնում, իսկ բառային ֆոները երբեք ամբողջությամբ չեն համընկնում: Դա օտար լեզվով շփվելու դժվարության հիմնական պատճառն է հանդիսանում:

Մասնագիտական կողմնորոշման բառապաշարի ուսուցման կարևոր բաղադրամաս են հոգեբանական հասկացությունները, դարձվածքային կաղապարությունները կամ կաղապարային բառերը և այլն:

Կարևոր եզրահանգում է այն, որ հոգեբանական եզրաբառը արդյունավետ չէ յուրացնել մեկուսացված: Այն պետք է ներմուծվի համապատասխան ուսումնախոսքային իրադրությունում, հաշվի առնելով տվյալ եզրաբառի կիրառման իմաստային և զուգորդական դաշտերը: Տարբեր ոճաժանրային մակարդակներում ուսուցանվող հոգեբանական հասկացության գործածումը հանգեցնում է դրա հիմնական իմաստային, գործառական և ոճական առանձնահատկությունների բացահայտմանը և յուրացմանը:

Երրորդ ենթազխում **«Անգլերենի հոգեբանական անհամարժեք բառապաշարի ուսուցման հիմնախնդիրը»** նշվում է, որ հոգեբանական եզրաբառերի, տարբեր հասկացությունների ուսուցումը պահանջում է տարբեր բնագրերի շուրջ հետևողական աշխատանք:

Հետազոտության հիմնախնդիրն առնչվող հետազոտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ապագա հոգեբանները հիմնականում ուսումնասիրում են օտարալեզու հոգեբանական գրանակություն, մյուս կողմից՝ նրանց մեծ մասի մոտ բացակայում է օտար մշակույթը, մտածելակերպի առանձնահատկություններն ընկալելու, հասկանալու դիրքորոշումը: Նրանք դժվարությամբ են հասկանում անգլալեզու երկրներում ապրող հոգեբանների մոտեցումները, քանի որ տարբեր է նրանց և մեր հոգեբանական պրակտիկան,

ավանդույթները, հոգեվերլուծական, հոգեբուժական կարծրատիպերը և սովորույթները:

Համացանցային հոգեբանական կայքերի վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչ բուռն զարգացում է ապրում հոգեբանական հարցերի քննարկման գործընթացն ամբողջ աշխարհում: Կարելի է տարբեր լեզուներով, առավելապես անգլերենով գտնել հոգեբանական տերմինների բառացանկեր, բառարաններ, թեստեր, հարց ու պատասխանի օրինակներ, տարբեր բնույթի քննարկումներ: Ապագա հոգեբանները նախ պետք է իմանան այդ մասին և պատրաստվեն այդ յուրահատուկ երկխոսությանը կամ բազմախոսությանը, երբ քննարկման առարկա կարող է լինել մի հոգեբանական եզրաբառը, կոնկրետ հոգեբանության դասականի տեսությունը, հայեցակարգն և այդ ամենն անգլերեն լեզվով:

Ըստ այդմ, նշվում է, որ հոգեբանական անհամարժեքությունները վերացնելու կամ բացերը լրացնելու երկու արդյունավետ եղանակ կա հանրագիտական և հետազոտական:

Երկրորդ **«Հոգեբանական բառապաշարի ուսուցման արդյունավետ կադապարը և դրա փորձարարական հիմնավորումը»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին **«Հոգեբանական կողմնորոշման տեսքատերի ընտրության և ընթերցանության սկզբունքները»** ենթագլխում հանգամանորեն վերլուծվում են հոգեբանական բնագրերի ընտրության ժամանակակից մոտեցումները:

Նշվում է, որ բնագրերի կիրառումն ուսուցողական նպատակներով արդյունավետ է նախ և առաջ նրանով, որ ուսանողները չեն շփվում լեզվակիրների հետ և հոգեբանական բնագրերը փոխհատուցում են ինչ-որ առումով այդ բացը:

Ընդհանուր առմամբ վերլուծվում են հոգեբանական ենթալեզվի ուսուցման շրջանառվող դասագրքերը: Նշվում է, որ դրանց հեղինակները հիմնականում շեշտը դնում են հոգեբանական բառապաշարի ուսուցման վրա, և առաջարկվող բնագրերը վերցված են հոգեբանության պատմությունից:

Հոգեբանների կյանքին և գործունեությանը նվիրված բնագրերին բնորոշ է գրական կամ գիտական ոճը: Խոսակցական ոճը հիմնականում անտեսվում է: Դրա պատճառներից մեկն այն է, որ դիտարկված չեն հոգեբանական բնագրերը խոսույթի մակարդակում:

Ներկայվում և վերլուծվում են ուսուցողական նպատակներով կիրառվող բնագրերը, խոսույթի տեսակները: Շեշտադրվում է այն գաղափարը, որ հոգեբանական բնագրերն ու խոսույթներն ուսուցողական նպատակներով ընտրելիս, անհրաժեշտ է հաշվի առնել գիտական, մասնագիտական, հրապարակախոսական, խոսակցական ոճերի առանձնահատկությունները:

Կարևոր է հոգեբանական բնագրերի ընթերցանության ընթացակարգերի մշակման հիմնախնդիրը: Արդյունավետ է այդ առումով հոգեբանական գերտեսքատերի ընթերցանությունը համացանցի միջոցով, քանի որ ամեն

հասկացություն, գիտաբառ կարելի է ուսումնասիրել, ընթերցելով այն բոլոր ներտեքստերը, որոնք հղվում են գերտեքստում:

Ուսումնական պայմաններում հոգեբանական բնագրեր ընթերցելու կարևոր միջոց են վիրտուալ խոսույթները: Նշվում է, որ ուսուցման միջին և ավարտական փուլերում ներմուծվում և վերլուծվում են հարատեքստ, բնաբան /էպիգրաֆ/ հասկացությունները: Կարևորվում է ներտեքստայնության տեսության կիրառումը մեթոդական նպատակներով, երբ ուսանողները հոգեբանական ենթալեզուն ուսումնասիրում են, հաշվի առնելով հոգեբանական տեքստերում հանդիպող խորագրի, նախաբանի, հետգրության, բնաբանի, հղումների, ծանուցումների /հարատեքստի/ առանձնահատկությունները:

Կարևորվում է նաև միջտեքստային հարբերությունների տիպաբանությունը, հատկապես երբ, հոգեբանական բնագրերն ընտրվում են ուսուցողական նպատակներով:

Վերլուծվում են կրեոլ և նախադեպային բնագրերը հոգեբանական բառապաշարի ուսուցման տեսանկյունից: Տրվում է նախադեպային տեքստի սահմանումը: Նշվում է, որ անզլերեն հոգեբանական ենթալեզվի ուսուցման ընթացքում արդյունավետ են հատկապես նախադեպային տեքստերը, արտահայտությունները, քանի որ դրա համար անհրաժեշտ է ունենալ լեզվակրին բնորոշ հենքային խորքային գիտելիքներ:

Ներկայացվում են տեքստի հետ աշխատանքի տարբեր ռազմավարությունները՝ ամփոփումների կամ ծանուցումների ընդգծումը, երբ առանձնացվում են առանցքային բառերը և հասկացույթները, ծանուցումը, կանխագուշակող ուղեցույցը, մտահորիզոնի ստուգումը, համագործակցային ծանուցումը, զուգահեռ խոսակցության ռազմավարությունը, դժվար հարցադրման ռազմավարությունը, մտահանգող ընթերցանությունը, ինտերակտիվ տեսողը, առանցքային հասկացույթների համակցումը, ձայնի ունկնդրումը, փոխաբերության վերլուծությունը, համընթաց գրառման ռազմավարությունը, հարց-պատասխանի փոխհարաբերությունները, միայն հարցեր, դեր, հանդիսատես, ձևաչափ, թեմա, փոխադարձ ուսուցում, սոցիոգրամ, մտածեք բարձրաձայն, երկխոսական ընթերցանական օրագիր, գրողի մասնագիտական սեմինար ռազմավարությունները:

Երկրորդ **«Ազլերեն հոգեբանական ենթալեզվի ուսուցման կադապարը»** ենթազխում ներկայացվում է մշակված կադապարը: Նշվում է, որ առաջարկվող կադապարի հիմքում ընկած հիմնական սկզբունքն այն է, որ միայն հոգեբանական տերմիններով և տերմինակապակցություններով տվյալ ենթալեզվի ուսուցումը չի կարող լինել արդյունավետ ոչ հաղորդակցական, ոչ էլ մասնագիտական իրազեկության տեսանկյունից:

Տրվում են տարբեր դասերի պլանավորման, անցկացման օրինակներ ըստ համապատասխան թեմաների: Ներկայացվում է դասի թեման, նպատակը, տևողությունը, պարագաները, ընթացքը:

Կարևորվում են նաև հոգեբանական այն բնագրերը, որոնք վերաբերում են անգլախոս հոգեբանների պատկերացումներին, նախապաշարմունքներին, դիրքորոշումներին, կարծրատիպերին, քանի որ այդ բնույթի բնագրերը պարունակում են հարուստ խոսակցական բառապաշար: Այդ բառապաշարի առանձնահատկությունն այն է, որ այն մշակութային, ազգային առումով նշույթավորված է: Բնորոշ լինելով ժողովրդական լեզվամտածողությանը, այն հարուստ է իրույթներով:

Վերջին **«Անգլերեն հոգեբանական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգը»** ենթազխում ներկայացվում են հոգեբանական բնագրերի և բառապաշարի շուրջ աշխատանքի վարժությունները, ընտրության սկզբունքները, վարժությունների տեսակները:

Հաղորդակցական մոտեցման տեսանկյունից կարևորվում են այն փոխակերպական վարժությունները, որոնք իրականացվում են խաղերով: Ակնհայտ է, որ փոխակերպական խաղերն ավելի արդյունավետ են անգլերենի ուսուցման ավելի ցածր մակարդակներում: Ապացուցվում է համապատասխան փորձարարական ուսուցմամբ, որ այդպիսի աշխատանքը բխում է ուսանողի հետաքրքրություններից և նպաստում ինտերակտիվ խոսքային գործունեություն ծավալելուն:

Փորձարարական և ստուգողական խմբերը բաղկացած էին ՀՊՄՀ-ի կրթության հոգեբանության և սոցիոգիայի ֆակուլտետի 2-րդ կուրսերի 99 ուսանողից: Համապատասխանաբար փորձարարական խմբում ընդգրկվել են 49 ուսանող, և ստուգողական խմբում՝ 50 ուսանող: Ուսանողների գիտելիքները գնահատվում են 20 բալանոց համակարգով:

Իրականացված փորձարարական ուսուցումը բաղկացած է երեք հիմնական փուլից՝ հաստատող, ձևավորող և ստուգողական:

Առաջարկվող անգլերեն հոգեբանական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգում բառային կոմպետենցիան գնահատվում է հետևյալ չափանիշներով.


1. տվյալ տեքստում հոգեբանական տերմինները ձանաչելու կարողություն,
2. հոգեբանական տերմինները թարգմանելու և անգլերեն լեզվով մեկնաբանելու կարողություն,
3. հոգեբանական հասկացույթները վերլուծելու կարողություն,
4. հոգեբանական իրույթները ձանաչելու կարողություն,
5. հոգեբանական դարձվածները հասկանալու կարողություն,
6. նախադեպային հոգեբանական արտահայտությունները շրջասելու կարողություն,
7. բառային սխալները բացահայտելու և ուղղելու կարողություն,
8. տարբեր իրադրություններում հոգեբանական տերմինների արագ և ճիշտ կիրառման կարողություն,
9. հեռահաղորդակցական միջոցներով գերտեքստերի, վիրտուալ տեքստերի, ներտեքստերի, բարդ տեքստերի հետ աշխատելու կարողություն,

10. հեռահաղորդակցական միջոցներով հոգեբանական գերտեքստեր, վիրտուալ տեքստեր, ներտեքստեր, բարդ տեքստեր թարգմանելու կարողություն:

**Աղյուսակ 1**

**Փորձարարական և ստուգողական խմբերի արդյունքների ամփոփիչ աղյուսակ**

Կարողություններ	Փորձարարական խումբ N – 49		Ստուգողական խումբ N – 50	
	փորձի սկզբում	փորձի վերջում	փորձի սկզբում	փորձի վերջում
1. Ճանաչել տվյալ տեքստում հոգեբանական տերմինները	11	17	12	14
2. Մեկնաբանել հոգեբանական տերմինները և թարգմանել	9	16	8	13
3. Վերլուծել հոգեբանական հասկացույթները	10	15	9	11
4. Ճանաչել հոգեբանական իրույթները	8	13	8	10
5. Հասկանալ հոգեբանական դարձվածները	12	17	11	13
6. Շրջանել նախադեպային հոգեբանական արտահայտությունները	9	14	8	12
7. Բացահայտել և ուղղել բառային սխալները	9	15	8	11
8. Կիրառել տարբեր իրադրություններում հոգեբանական տերմինները արագ և ճիշտ	10	16	9	12
9. Աշխատել հեռահաղորդակցական միջոցներով գերտեքստերի, վիրտուալ տեքստերի ներտեքստերի, բարդ տեքստերի հետ	8	14	8	10
10. Թարգմանել հեռահաղորդակցական միջոցներով գերտեքստեր, վիրտուալ տեքստեր, ներտեքստեր, բարդ տեքստեր	8	16	7	11



**Փորձարարական արդյունքների ամփոփիչ Տրամագիր 1**

Փորձարարական աշխատանքի վերջում արձանագրվել է ուսանողների հոգեբանական բառապաշարի զարգացման միտում: Դա վերաբերում է թե՛ հոգեբանական բառապաշարի տարբեր շերտերը ճանաչելուն, թե՛ դրանց տարբեր իրադրություններում կիրառելուն: Հետազոտության վերջում, նրանք ոչ միայն սկսեցին ազատորեն գործածել իրենց անգլերեն խոսքում հոգեբանական բառապաշարը, այլև փոխվեց նրանց վերաբերմունքը հոգեբանական բառապաշարի հետ հետևողական և շարանունական աշխատանքի նկատմամբ:

Հետազոտության արդյունքում ստացված տվյալները հաստատեցին հոգեբանական բառապաշարի զարգացման տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը:

**Եզրակացություն**

1. Հոգեբանները հաղորդակցվում են միջանձնային, գիտական, մասնագիտական, կենցաղային մակարդակներում: Միայն հաղորդակցության նշված ոլորտները հաշվի առնելով, հնարավոր է մշակել անգլերեն հոգեբանական բառապաշարի ուսուցման այնպիսի մեթոդական համակարգ, որը կնպաստի ոչ միայն նշված, այլև միջմշակութային հաղորդակցության ոլորտում հաղորդակցվելու համար:

2. Անզլերեն հոգեմաքական ենթալեզուն ուսուցանելու, յուրացնելու ռազմավարությունները մշակելիս, անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն անզլալեզու հոգեբանների մշակույթը, այլև նրանց մասնագիտական շփման մշակույթը, վարքագծային նորմերը, կարծրատիպերը:

3. Հոգեբանական կողմնորոշման անզլերեն բառապաշարի ուսուցումը ենթադրում է մասնագիտական եզրույթների, հոգեբանական ծառայությունների ոլորտում կիրառվող տարբեր հասկացությունների, լեզվամշակութային բնույթի իրակությունների հետևողական յուրացում: Ընդ որում՝ մշակված մեթոդական համակարգի առանցքն են կազմում ոչ միայն հոգեբանական եզրույթները, լակունամները, նորաբանությունները «ծեծված» արտահայտությունները, անհամարժեք բառապաշարը, այլև անզլալեզու հոգեբանների մասնագիտական վարքը և հաղորդակցական վարքագիծը:

4. Անզլերենի մասնագիտական կողմնորոշման դասընթացում օտարալեզու բնագրերի ընթերցումը պահանջում է համապատասխան պատրաստվածություն, դրդապատճառների և նպատակադիրքորոշման ուսումնամեթոդական գրականության, տեխնիկական, հեռահաղորդակցական միջոցների առկայություն, ինչպես նաև ընթերցանության տարբեր ռազմավարությունների կիրառում:

5. Հեռահաղորդակցական տեխնոլոգիաներով հոգեբանական բնագրերի շուրջ աշխատանքը ենթադրում է հաշվի առնել սովորողների լեզվական-լեզվաբանական և մասնագիտական գիտելիքների մակարդակը, մասնագիտական կողմնորոշման բառապաշարի, հեռահաղորդակցական տերմինաբանության և հոգեբանական ծառայությունների ոլորտում անզլերենի ամենօրյա-խոսակցական բառապաշարի առանձնահատկությունները:

6. Միայն ուսումնական բնագրերով հոգեբանական բառապաշարի ուսուցումը չի կարող տալ ցանկալի արդյունք: Տարբեր բնույթի տեքստերի ընտրությունն իրականացվում է, հաշվի առնելով տվյալ դասընթացի նպատակն ու խնդիրները, ինչպես նաև ժամանակակից ուսուցման մեթոդների կիրառման հնարավորությունները:

7. Հոգեբանական բնագրերի ընտրությունն իրականացնելիս, անհրաժեշտ է հաշվի առնել դիդակտիկական մատչելիության, զննականության, գիտականության սկզբունքները, ինչպես նաև հոգեբանական խոսույթի, վիրտուալ խոսույթի, գերտեքստի, ներտեքստի, նախադեպային բնագրի շուրջ աշխատանքի ռազմավարությունները, դրանց կրթական, դաստիարակչական և զարգացնող գործառույթները:

8. Հոգեբանական նախադեպային տեքստերի միջոցով բառապաշարի ուսուցումը ենթադրում է հոգեբանական հասկացությունների յուրացում, առանց որի հնարավոր չէ սովորել ոչ միայն հոգեբանական անհամարժեք բառապաշարը, իրույթները, այլ ազգամշակութային նշույթավորում ունեցող բառապաշարը, որն առնչվում է այս կամ այն չափով հոգեբանական գիտական և հոգեբանական ծառայությունների ոլորտներին:

9. Անգլալեզու հոգեբանական ֆիլմերի ուսուցողական նպատակներով կիրառումը հնարավորություն է ընձեռում ծանոթացնել ապագա ուսանողներին լեզվակիր հոգեբանների կենսագործունեության առանձնահատկությունների հետ, զարգացնել նրանց լեզվական հմտությունները, խորացնել նրանց հենքային գիտելիքները: Ֆիլմերի միջոցով զարգանում է ոչ միայն ուսանողների մասնագիտական բառապաշարը, այլև յուրացվում են լեզվակիր հոգեբանների ժեստերը, դիմախաղը, տարբեր հարալեզվական միջոցները:

10. Մշակված մեթոդական համակարգի արդյունավետությունը հաստատվում է նրանով, որ փորձարարական ուսուցման վերջում արձանագրվել է ուսանողների անգլերեն հոգեբանական բառապաշարի զարգացման միտում: Դա վերաբերում է թե՛ հոգեբանական բառապաշարի տարբեր բաղադրիչները ճանաչելուն, թե՛ դրանց տարբեր մասնագիտական հաղորդակցման իրադրություններում կիրառելուն:

### **Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.**

1. Այվազյան Ս.Ռ., Կարապետյան Ի.Կ. Անգլերենի հոգեբանական բառապաշարի ընտրության սկզբունքները: Օտար լեզուները Հայաստանում, 2011, թիվ 5, էջ 43-50:

2. Այվազյան Ս.Ռ. Անգլերենի հոգեբանական լակունաների յուրացման հիմնախնդիրը, Հոգեբանություն և կյանքը, 2011, թիվ 3-4, էջ 35-40:

3. Այվազյան Ս.Ռ. Հոգեբանական տեքստերի ընտրության հիմնախնդիրն անգլերենի մասնագիտական կողմնորոշման դասընթացում: Օտար լեզուները Հայաստանում, 2012, թիվ 6, էջ 21-31:

4. Այվազյան Ս.Ռ., Կարապետյան Ի.Կ. Անգլերեն հոգեբանական լեզվի ուսուցման կադապարը: Ժողովածու Խ.Աբովյանի անվան Հայկական Պետական Մանկավարժական համալսարանի 90 -ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի, 2014, էջ 203-204:

**АЙВАЗЯН СОНА РАФАЕЛОВНА**

**МЕТОДИЧЕСКАЯ СИСТЕМА ОБУЧЕНИЯ ПСИХОЛОГИЧЕСКОЙ  
ЛЕКСИКЕ В ПРОФЕССИОНАЛЬНО-ОРИЕНТИРОВАННОМ КУРСЕ  
АНГЛИЙСКОГО ЯЗЫКА**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - “Методика преподавания и воспитания” (английский язык)”.

Защита диссертации состоится 29-го января 2015 г. в 12<sup>00</sup> на заседании специализированного совета по педагогике 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

**РЕЗЮМЕ**

**Актуальность исследования.** Традиционно обучение английскому психологическому подязыку направлено на приобретение рецептивных навыков чтения и перевода. Английская психологическая лексика, грамматика, фонетика обучаются посредством чтения и перевода академических текстов и выполнения языковых упражнений. Современные личностно-ориентированные, телекоммуникационные технологии, интерактивные методы и приемы применяются без определенной методической системы.

Армянские психологи преодолевают определенные трудности, связанные с чтением специальной литературы на английском языке. Кроме лингвистических трудностей, они преодолевают еще и психологические, лингвокультурные, профессиональные трудности при непосредственном контакте с англоязычными психологами. Лексическая компетенция является важным и неотъемлемым компонентом коммуникативной и профессиональной компетенции.

В процессе обучения английскому психологическому подязыку закладываются основы непрерывного образования. В этом контексте обучение данному слою лексики является актуальной проблемой.

**Целью исследования.** Создание продуктивной модели обучения психологической лексике английского языка и разработка методической системы развития коммуникативной компетенции у будущих психологов на профессиональном уровне.

**Задачи исследования:**

1. Изучить научно-методическую литературу по обучению английской психологической лексике: терминам, категориям, концептам и понятиям.
2. Систематизировать принципы отбора английской психологической лексики, стратегии обучения.

3. Установить процедуру перевода психологических терминов, терминосочетаний, специальных понятий и реалий.
4. Разработать методическую систему развития профессиональной, лексической и коммуникативной компетенции у будущих психологов.

**Научная новизна исследования:**

Разработана методическая система развития профессиональной, лексической и коммуникативной компетенции у будущих психологов, в основе которой лежат коммуникативно-когнитивные, прагматические подходы, а также принципы и стратегии преодоления межязыковой, межкультурной, дискурсивной интерференции. Продуктивность разработанной методической системы обоснована соответствующим опытным обучением.

**Теоретическое значение исследования:**

Определены цели и задачи отбора и обучения психологически-ориентированной лексики и фразеологических единиц, выявлены стилистические особенности профессиональной лексики, в сфере общенаучной, узко-профессиональной и разговорной лексики.

Создана методическая система развития лексической и коммуникативной компетенции в психологически-ориентированном курсе английского языка.

**Практическое значение исследования:**

Разработана система упражнений для обучения психологически-ориентированной лексике, анализа психологических специальных, научно-популярных текстов и скриптов как художественных, так и научно-популярных, документальных фильмов. Определены критерии оценки лексических рецептивных и продуктивных умений, которые могут способствовать практическому овладению профессионально-ориентированным английским языком, эффективному применению существующих учебников, созданию новых учебно-методических комплектов, разработок, проектированию новых курсов и планированию новых уроков.

**Апробация результатов исследования:**

Основные положения результатов исследования обсуждались на заседаниях кафедры методики преподавания иностранных языков АГПУ им. Х. Абовяна. Результаты исследования были апробированы на факультете психологии и социологии образования АГПУ им. Х. Абовяна.

**Содержание исследования** отражено в структуре диссертации, которая состоит из двух глав, введения, заключения, библиографии и приложений.

По теме диссертации опубликовано четыре научных статьи.

**AYVAZIAN SONA RAFAEL**

**THE METHODOLOGICAL SYSTEM OF TEACHING ENGLISH  
PSYCHOLOGICAL VOCABULARY IN ESP**

Thesis for degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.02 -  
"Methods of teaching and education" (English language).

The defense of the thesis will be held at 12<sup>00</sup> on January 29, 2015 at the session of the Special Board on Pedagogy 020 HAC (Higher Attestation Commission) to award degrees under the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, address: 0010, st.Tigrana Mets 17, Yerevan.

**SUMMARY**

**The relevance of the research.**

Traditionally English psychological sublanguage teaching is aimed at acquiring reading and translating receptive habits and skills. English psychological vocabulary, grammar, phonetics are studied through reading and translating academic texts and language exercises. Modern person-oriented, telecommunicative technologies, interactive methods and techniques are used without certain methodical system.

Armenian psychologists have to overcome the different difficulties associated with reading literature in English. They overcome either linguistic or psychological, professional, linguocultural difficulties when communicating directly with the English-speaking psychologists. The psychologists become to be aware of these difficulties to specialize in a particular field of psychology and psychoanalysis. The lexical competence is considered to be the important and integral component of communicative and professional competences.

During learning the English psychological sublanguage the psychologists lay the foundations of continuous education. In this context, teaching professionally-oriented vocabulary is an urgent problem of higher school in PA educational system.

**The aim of the research is** to create a productive model of teaching professionally-oriented English vocabulary and develop the methodological system of developing communicative competence of student-psychologists at the professional level.

**Objectives of the research:**

1. Study the scientific and methodological literature on learning English psychological vocabulary: the terms, categories, concepts and notions.

2. Systematize the principles of selection of English psychological vocabulary and learning strategies.
3. Identify the procedures for the transfer of psychological terms, term-combinations, special concepts and realias.
4. Develop the methodological system of developing professional, lexical and communicative competence of student-psychologists.

**Scientific novelty of research:**

The research works out the methodological system of developing the professional, lexical and communicative competence of future psychologists, which is based on cognitive-communicative, pragmatic approaches, as well as the principles and strategies for overcoming intralingual, intercultural, discursive interference and typical linguistic and technical difficulties. The productivity of developed methodological system is proved by the relevant experiential teaching.

**The theoretical value of the research:**

The aims and objectives of the selecting and teaching psychologically-oriented vocabulary and phraseological units, reveals the stylistic features of professional vocabulary, taking into account the functioning narrowly professional and colloquial vocabulary in the general scientific spheres.

It develops the methodological system of teaching lexical and communicative competence in the psychologically-oriented English course.

**The practical significance of the research:**

The elaborated system of exercises are aimed at teaching psychologically-oriented vocabulary, analyzing special psychological, popular scientific texts and scripts, both feature and popular scientific, documentary films. It determines the criteria of evaluating receptive and productive skills that can contribute to the practical teaching professionally-oriented English, effective use of existing textbooks, creating new teaching sits, designing new courses and planning new lessons.

**Testing results of research:**

The main findings of the research results were discussed at the foreign language teaching department in ASPU after Kh. Abovyan. The results of the research were tested at the Faculty of Psychology and Sociology in ASPU after Kh. Abovyan.

The content of the study reflected in the structure of the thesis, which consists of two chapters, introduction, conclusion, bibliography and appendices.

On the topic of the dissertation is published four scientific papers.

